ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Գ. Շիրակամուտ

N°—Ե -03/295

«02» 11. 2020թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղուկասյան

Ներկայացնում եմ Շիրակամուտ համայնքի ավագանու թիվ 25-Ա, 26-Ա, 27-Ա, 28-Ա և 29-Ա որոշումները:

Առդիր 7 էջ:

Համայնքի ղեկավար Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ
,,30'' հոկտեմբերի 2020 թվականի N25-Ա

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020Թ.ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30 -Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին'' ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և 17-րդ հոդվածով համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Շիրակամուտ համայնքի ավագանու 2020թվականի հոկտեմբերի 30-ի արտահերթ նիստի օրակարգը

ՕՐԱԿԱՐԳ

1.Շիրակամուտ համայնքի ավագանու 2020թ. հոկտեմբերի 30-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Շիրակամուտի համայնքի սեփականություն հանդիսացող 06-087-0020-0002 ծածկագրով 0,25812 հա հողամասը աճուրդով օտարելուն համաձայնություն տալու մասին:
3. Շիրակամուտ համայնքի ղեկավարի կից խորհուրդ ստեղծելու մասին:
4. Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմի մասին:
5 . Շիրակամուտ համայնքի 2020 թվականի բյուջեի III-րդ եռամսյակի կատարման ընթացքի վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումը ընդունելու մասին:

Համայնքի ավագանու անդամներ	կողմ/4 /	դեմ /0 /	ձեռնպահ/ 0 /
Ա.Կյուրեղյան			
Ա.Պապոյան			
Հ.Նալբանդյան			
Ն.Նասլյան			

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ

,, 30" հոկտեմբերի 2020 թվականի N26-Ա

ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-087-0020-0002 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,25812 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 67-րդ հոդվածի 1-ին կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 12.04.2001թ. 286-Ն որոշմամբ հաստատված կարգով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Շիրակամուտ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության 06-087-0020-0002 ծածկագրով , 0,25812 հա մակերեսով հողամասը մեկ լոտով աճուրդ վաճառքով օտարելու: Մեկնարկային գինը՝ 645000 ՀՀ դրամ, մասնակցության վճարը՝ 2000 ՀՀ դրամ, նախավճարը՝ մեկնարկային գնի 5%-ի չափով, աճուրդի քայլի չափը 5000 ՀՀ դրամ: Հողամասի նկատմամբ սահմանափակումներ չկան:

Համայնքի ավագանու անդամներ	կողմ/3 /	դեմ /1 /	ձեռնպահ/ 0 /
Ա.Կյուրեղյան	—		
Ա.Պապոյան			
Հ.Նալբանդյան			
Ն.Նասլյան			

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք, գ.Շիրակամուտ
հեռ. 6-15-01

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

,,30"հոկտեմբերի 2020 թվականի N 27 -Ա

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԻՑ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով՝

Շիրակամուտ համայնքի ավագանին որոշում է.

1. Ստեղծել Շիրակամուտ համայնքի ղեկավարին կից համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման) խորհուրդ հետևյալ կազմով՝

1. Աշոտ Երանոսյան - համայնքի ղեկավար , խորհրդի նախագահ,
2. Հասմիկ Երանոսյան - աշխատակազմի քարտուղար , խորհրդի քարտուղար
3. Արտյոմ Պապոյան - ավագանու անդամ, խորհրդի անդամ
4. Ներսես Նասլյան -ավագանու անդամ, խորհրդի անդամ
5. Սեդա Մելքոնյան - համայնքի բնակիչ, խորհրդի անդամ
6. Վախթանգ Երանոսյան -համայնքի բնակիչ, խորհրդի անդամ
7. Հայրապետ Հայրապետյան - համայնքի բնակիչ, խորհրդի անդամ
8. Մնացական Պալյան -համայնքի բնակիչ, խորհրդի անդամ
9. Մարզպետ Կյուրեղյան - համայնքի բնակիչ, խորհրդի անդամ

2. Խորհրդին՝ գործունեությունը իրականացնել համայնքի ավագանու 2016թ. դեկտեմբերի 2-ի ,,Շիրակամուտ համայնքի ղեկավարին կից, Շիրակամուտ համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները, ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին " N41 -Ն որոշմամբ սահմանված կարգով:

3.Ուժը կորցրած ճանաչել Շիրակամուտ համայնքի ավագանու 2017թ. օգոստոսի 7-ի ,,Շիրակամուտ համայնքի ղեկավարին կից խորհուրդ ստեղծելու մասին" N21-Ա որոշումը:

Համայնքի ավագանու անդամներ	կողմ/4 /	դեմ /0 /	ձեռնպահ/ 0 /
Ա.Կյուրեղյան			
Ա.Պապոյան			
Հ.Նալբանդյան			
Ն.Նասլյան			

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ

,,30 '' հոկտեմբերի 2020թվականի N28-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, Շիրակամուտ համայնքի ավագանին որոշում է.

1. Շիրակամուտ համայնքի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմերում ընդգրկվող ավագանու անդամների թիվը սահմանել երեք և հանձնաժողովների անհատական կազմերում ընդգրկել ավագանու հետևյալ անդամներին՝

1. Արտյոմ Պապոյան
2. Ներսես Նասլյան
3. Աղասի Կյուրեղյան

2.Ուժը կորցրած ճանաչել Շիրակամուտ համայնքի ավագանու 2017թ.. հունվարի 24-ի«Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմի մասին» թիվ 5-Ա որոշումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ	կողմ/ 4 /	դեմ /0 /	ձեռնպահ/ 0 /
Ա.Կյուրեղյան			
Ա.Պապոյան			
Հ.Նալբանդյան			
Ն.Նասլյան			

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ

,, 30'' հոկտեմբերի 2020 թվականի N29 -Ա

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ III-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, հիմք ընդունելով Շիրակամուտ համայնքի ղեկավարի՝ 2020 թվականի բյուջեի III-րդ եռամսյակի կատարման ընթացքի մասին ներկայացրած հաղորդումը ,Շիրակամուտ համայնքի ավագանին որոշում է .

1.Ընդունել ի գիտություն Շիրակամուտ համայնքի 2020 թվականի բյուջեի III-րդ եռամսյակի կատարման ընթացքի մասին համայնքի ղեկավարի հաղորդումը՝ համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանու անդամներ	կողմ/4 /	դեմ /0 /	ձեռնպահ/ 0 /
Ա.Կյուրեղյան			
Հ.Նալբանդյան			
Ա.Պապոյան			
Ն.Նասլյան			

Համայնքի ղեկավար Ա.Երանոսյան

Հավելված
Շիրակամուտ համայնքի ավագանու
,,30" հոկտեմբերի 2020թ. N29 -Ա որոշման

ՀԱՂՈՐԴՈՒՄ

Շիրակամուտ համայնքի 2020թ.բյուջեն III-րդ եռամսյակի կտրվածքով կատարվել է ա/եկամուտների գծով 95,7 տոկոսով, նախատեսված 48192,2 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են46111,4հազար դրամ:
Սեփական եկամուտները,(հարկեր և տուրքեր,այլ եկամուտներ,մուտքեր հիմնական միջոցների իրացումից) նախատեսված 5814,1 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 4606,3հազար դրամ կամ բյուջեն սեփական եկամուտների գծով կատարվել է 79,2%-ով:
Պաշտոնական դրամաշնորհների գծով (ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ) նախատեսված 37951,0հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 37951,0 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 100%:
բ/ Ծախսերի գծով կատարվել է 68,5 %-ով նախատեսված 67001,0 հազար դրամի դիմաց դրամարկղային ծախսերը կազմել են 45910,8 հազար դրամ:

1.Վարչական բյուջեի եկամուտներ

Վարչական բյուջեի եկամուտները 9 ամսվա համար նախատեսված 48192,2 հազար դրամի դիմաց կազմել են 46111,3 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 95,7%

1.1 Հողի հարկ

Հողի հարկի գծով 9 ամսվա համար նախատեսված 3109,1հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 2038,7հազար դրամ կամ կատարողականը կազմել է 65,6 %

1.2 Գույքահարկ

Գույքահարկի գծով 9 ամսվա համար նախատեսված 2425,0 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 2229,3 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 91,9%

1.3 Տեղական տուրքեր

Տեղական տուրքերի գծով եկամուտները 9 ամսվա համար նախատեսված 280,0 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 337,6հազար դրամ կամ կատարողականը կազմել է 120,5%:

1.4 Այլ եկամուտներ

Այլ եկամուտների գծով 9 ամսվա համար նախատեսված 2865,0 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 1968,9հազար դրամ, 68,5%:
Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացում կատարվել 1414,1 հազար դրամ, նախատեսված է եղել 2872,1հազար դրամ ,որը կազմում է 49,2%:
Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը կազմում է 0 դրամ:

2.Վարչական բյուջեի ծախսեր

Վարչական բյուջեի ծախսերը 9 ամսվա համար նախատեսված 67001,0 հազար դրամի դիմաց կատարվել է 45910,8 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 68,5%:

Ըստ գործառնական դասակարգման և ծրագրերի ծախսերը կատարվել են հետևյալ կերպ՝
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ 69,5%:
Սոցիալական պաշտպանություն 20,8%:

3.Ֆոնդային բյուջեի ծախսեր

Ֆոնդային բյուջեով 9ամսվա համար նախատեսված ծախսերը կատարվել է 63,7%:

Տնտեսական հարաբերություններով մուտքագրվել է 398,9 հազար դրամ:

Շիրակամուտ համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

Առաջատար մասնագետ հաշվապահ՝ Ա.Մազմանյան